ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը՝ Հայաստանի Հանրապետությունում Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 27-րդ տարեդարձի առթիվ.

Սիրելի՛ հայրենակիցներ,

արդեն 27 տարվա պատմություն ունի Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետության համայնքներում: Այդ համակարգի ներդրման շնորհիվ մենք համայնքային կյանքում ստեղծեցինք տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի աշխատակազմ եւ ավագանի, որոնց գործունեությամբ կարողացանք առաջ տանել ու զարգացնել կառավարության կողմից սահմանված բարեփոխումները, բարձրացնել կյանքի որակը, իրականացնել պետական ծրագրերը, ժամանակին արձագանքել տեղերում առաջացած խնդիրների կարգավորմանը, ապահովել համագործակցությունը պետական մարմինների, միջազգագային դոնոր ու տեղական հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնել կենսական կարեւոր նշանակության բազմաթիվ ծրագրեր կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների զարգացման, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության եւ այլ ոլորտներում:

Անցած 27 տարիների ընթացքում մենք համատեղ աշխատանքով բազմաթիվ խոչընդոտներ ենք հաղթահարել, չափազանց դժվարին ճանապարհ անցել, սակայն կարողացել ենք ապահովել հիմնական արդյունքը՝ կյանքի առաջընթացն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում: Այդ տեւական ժամանակի ընթացքում Տեղական ինքնակառավարման համակարգը ենթարկվել է որոշակի փոփոխությունների ու կատարելագործման, սակայն նրա բովանդակությունն ու առաքելությունը մնացել են նույնը՝ որպես պետականաշինության կարեւոր բաղադրիչներից մեկը: Արվել ու արվում է հնարավորը, որպեսզի մարդիկ իրենց զգան որպես պետության մի մասնիկը, որպեսզի իշխանությունը միշտ մոտ ու հասանելի լինի հանրությանը, որպեսզի ապահովվի տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունը:

Համայնքների խոշորացման քաղաքականության ներդրման արդյունքում, ինչպես արդեն նշմարվում է մեր կյանքում, նոր որակ, նոր թափ է ստացել Տեղական ինքկառավարումը: Այն արդեն տեսանելի է մեզանում աստիճանաբար աճ գրանցող շինարարական եռուզեռով, ճանապարհների, դպրոցների, մանկապարտեզների, խմելու եւ ոռոգման ջրատարների, լուսավորության ցանցերի կառուցմամբ, որոնց գումարային ծավալներն ադեն հասնում են մի քանի տասնյակ միլիարդ դրամների: Եվ այդ հայրենաշինական ծրագրերն արվում են ի շահ Հայաստանի Հանրապետության քաղաքացու բարեկեցիկ ու բարօր կյանքի, ի շահ մեր հայրենիքի ամրապնդման ու զարգացման, նրա կենարար ապագայի:

Կարծում եմ, որ ժողովրդի ընտրությամբ կայացած Տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակի ընթացքում արդարացրել են իրենց սպասելիքները, եւ անաչառ գնահատականը միշտ եղել է իրականացված աշխատանքների վերջնարդյունքը:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս՝ Հայաստանի Հանրապետությունում Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 27-րդ տարեդարձի առթիվ, մաղթում խաղաղ հայրենիք, քաջառողջություն, ստեղծագործ աշխատանք, նորանոր ձեռքբերումներ մեր կյանքի բոլոր ոլորտներում:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան